

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 43

Գ. ՇՐՋԱՆ

26 ՀՈԿՏԵՄԲ. 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար «ԲԱՅԱՆՈՒՄ» ղը. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղը., կանխիկ վճարելի: Ինքստահեման՝ 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն լրնդումուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին առէն ամսոյ մէկէն: ՄԻԱՅԵՐԵԱ երապարակ կ'եղի առէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խնայն խնայնեն խմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ՝ աշխատակաւ առարկութիւնները նկատողութեան չեն առնուի:

Ձի երաստամբումսմ ձեռագիրները եւ չեն դարձուի:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سته

ԽՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԲԺՅԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գնդ. Տոք. Աղեփանդր Պէյ Արապեան այս անգամ իր բնակութիւնը հաստատած է Բերա, Թարա-Պաշի քիւ 121, ուր կը գրեցուի առաւօտ եւ երեկոյ: Իսկ կես օրուան միջոցները, ուրբաթ եւ կիրակիէ զաւ, կը գտնուի Պանեն-Գաբու, Մինասեան դերաւանը:

1-10

ՏՈՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Կեդրոնացեալի Մասքեսեան Տպարան

Ֆինանսները, Կ. Պոլիս

Գիտական շարժում Ա. Տարի (1885) (Սպառած) : — Գիտական շարժում Բ. Տարի (1886) 20 զրշ : — Գիտական շարժում Գ. Տարի (1887) 20 զրշ : — Բնական Պատմութիւն Ա. Հատոր (Կենդ. Հիւսուած արանութիւն եւ Մարդկային կազմախօսութիւն ու Բնախօսութիւն, Դասագիրք երկրորդական վարժարանաց) : 40 զրշ : — Նախորդին համառոր. Դասագիրք Նախակրթարանաց : 8 զրշ : — Ուսումնասիրութիւն միջոյն քաւրերու պատճառարանութեան եւ կազմութեան վրայ (Ֆրանսերէն) 10 զրշ : — Ծագումն հայ տառից (Պատկեալ Իլլիւրանց մրցանակաւ) 10 զրշ : — Մանրէարանութիւն 10 զրշ : — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Ֆրանսերէն) 10 զրշ : — Գրիգոր Աղաթոն (Ծագում եւ կենսագրութիւն) 2 1/2 զրշ : — Առողջապահութիւն : 25 զրշ : — Ծննդական գործարան (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն) 6 զրշ : — Մարդկային Սպանախօսութիւն : 5 զրշ : — Բառացուցակ Արտանուանց (Բ. Տիպ) 3 զրշ : — Տարուինակութիւն (Գ. Տիպ) 3 զրշ : — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Հայ. Թարգմանութիւն) 10 զրշ :

1-10

Դասուն ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, 60 Էսկի-Չապրիէ Ճաւսխի, 60

Հրատարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԷԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

190 էջ, 16ածալ, զին 5 զրշ.

Ձարդարուած բազմաթիւ լուստիպ պատկերներով : Անհրաժեշտ ամէն դպրոցականի եւ վաճառականի :

Նոյն հեղինակին՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԵԶԻՆ ԴԱՍԵՐԾԱՅԲ

240 էջ, պակարդ. զին 5 զրշ

Էւրոպական ամենէն համալուար եւ նորագոյն գործերու հնանդագիտութիւն :

Այն երկու գործերու իւրաքանչիւրէն գաւառի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 փարայի դրոշմաթուղթի փոխարէն :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ԺՈՂՏՏ, ԹԻՒ 200

Կալաքա-Սիւրայի Լիւթին դէմ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 էն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ա. ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագիւններ ու տոկոս	54,000.000 »
Երաշխատութեան գումար	122,000.000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400.000 »

Կեդրոնացեալի, Դալաքիոյ քաղաքին վրայ, Մախասան հին տեղը
 Ընդհ. Գործակալ
 Ա. ՀԻՒՐՄԻՒՅ
 ԹԷՈՏՏՈՐ ԱԷՔԲԷՆ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902 —

ԹԻՒ 43

Ի ՈՎ Ա Ն Դ Ս Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Օտար ազդեցութիւնը մեր գրականութեան մէջ. ՀԱՐՄԱՆ: — Էթիկիկոյ նորընտիւր Ս. Կարողի-կոսը: — Գրախօսական. Նոր հրատարակութիւններ. Ս. ԱՆՏԵՆՆԻՍ: — «Այլ եւ ուրիշ». ԳԲԻ-ՋԱՆԹԷՄ: — Նոր Ս. Օխարիի բարեբեկն (Թարգմ.): — Ծիւղկաթինը (Հեքեաթ) ՓԱՅԼԱԿ: — Անդ-րադարձում (Սիրերգ) Մ. Ա. ՊԱՐՄԱՄԵԱՆ: — Գաւառային գրականութիւն. «Ծաղկոց». ԳԵ. ԳԱՄ: — Յուշեր:

ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գրական համաշխարհականութիւնը (cosmopolitisme) տիրապետող հոսանքն է այսօր զարգացած ազգերու մատուորականութեան մէջ, մարդասիրական տաք շունչով մը ոգեւորելով բոլոր տաղանդաւոր գրողները: Այս ուղղութեամբ երեւոյթը բնական մէկ հետեւանքն է անտեսական ու գիտական միջազգայնութեանը որ իր համաշխարհիկ գրողները կը թուաւ նաեւ զուտ գեղագիտական եւ գրական արտադրութիւններու վրայ:

Երկրի մը գրականութիւնը՝ իրեն համայնքը իր մտաւոր արտադրութեանց՝ համասեւ եւ համատարր հիւստեամբ մը չունի: Ինչպէս որ ժողովուրդի մը դարաւոր ֆիզիքական կազմը աննմանակ տարրերու խառնուրդ մըն է, իր գրականութիւնն ալ, իր բնական հոգեկան կեանքին՝ չքեղ ծաղիկը, իր էութեան աշխուագոյն մասը, իր տոհմին հաւաքաւոր ցոլացումը, թէ իսկ իր արտաքին ձեւովը այդքանաժին եւ ինքնարեւոյտն ոյժ մը, իսկապէս զանազան գրական ազդակներու տակ փթթող տունկ մըն է: Ամէն աշխարհ մը կրնայ վերլուծուիլ մը կրնան հետեւիլ քաղաքակիրթ ժողովուրդի մը մտաւորական շարժումին, որ իր զարգացման

ընթացքը բոլորած է՝ ոսկեդարու մը բարձրութեանը հասնելով, շատ դիւրաւ կրնան նշմարել հոն օտար հոսանքներու ափսոսներ, որոնք յաճախ իրենց ազդեցութեան չընկալանքները դարերու վրայ կ'ընդլայնեն:

Գաղափարի եւ նոր տարրերու այդ ասանջականութիւնը կ'օժտէ եւ կ'ուժաւորէ նորածին գրականութիւն մը, որուն կենսական պահանջն է նմանող ըլլալ գլուխ-գործոցներու, մինչեւ որ իր կարգին՝ ինքն ալ ստեղծող գործութիւն մը չինէ իր մէջ. նմանութիւնը դրականութեան մէջ, շատ անգամ արագ ճամբայ մըն է, որ կը դիւրացնէ մտքին վերելքը այն աստիճաններէն, որոնց ենթարկուած է ան: Հռոմայեցիները նմանցնելով Յոյները՝ հաւասար բարձրութեան մը հասան արուեստի մէջ: Արեւմուտքի քաղաքակիրթութեան սերմերը արեւելքի հորիզոններէն եկած են: Եւրոպական արդի գրականութիւնը դասականովը սնած է: Գաղափարներու անհուն եւ տիեզերական չընթերցանութեան մէջ միթէ գիտե՞նք թէ ուսկից կու գան, կամ սրտէ կը պատկանին անոնք: Մեծ, բեղուն եւ առողջ գաղափարները սննդական, նիւթական պէտքերու պէս հասարակաց են եւ անխտրական,

հոգ չէ թէ անոնք Ամերիկայի բերք մը ըլլան, կամ անկլո-սաքսոն եւ լատին արտադրութիւն : Իմաստուն գրագէտը զգուշաւոր պատշաճեցումով մը կ'որդեգրէ զանոնք, զարգացնելու եւ ծաղկեցնելու համար իր հասարակութեան հոգեկան կեանքը :

Համամիտ եմ անոնց որ ձայն կը բարձրացնեն մեր գրագէտներէն ոմանց այն անխոհեմ լայնամտութեան ու տարտամ ձրգտումին դէմ, որ անպարիսպ արձակ հըրապարակի մը պէս, եւրոպական կեանքովը կ'ողողեն մեր գրականութիւնը : Չեմ գիտեր, սակայն, թէ ասոնք ալ — այս տոհմասէրները — ինչպէ՞ս կ'ըմբռնեն գրական կեանքը ճշմարտապէս անհասկնալի կը մնան, եթէ տեսակ մը չինական պարիսպով կ'ողղեն չըրջափակել ինքզինքնին, անհաղորդ մնալով մտաւոր արեւելեական կերպարանափոխութիւններուն, այն յաւակնութեամբ թէ իրենք իրենց կը բաւեն : Նոյնպէս իրենց ճշմարիտ դերին մէջ չեն գտնուիր եւրոպական գրականութեան ըմբռնողներն ալ, երբ միշտ հետեւելով օտար գրական յառաջընթացութեան քայլերուն, չեն կրնար անկէջ դառնել, քամն ինչ որ հզօր, գեղեցիկ եւ մարդկային է եւ իրենց տոհմիկ գրականութեան մէջ ներմուծել :

Գրականութիւնը եւ արուեստները համալիարհիկ են : Մարդկային հոգին ամէն տեղ ծարաւի է աղնիւրին ու ճշմարտին, բաւական է որ զարգացման որոշ կէտի մը վրայ գտնուի : Յիդիքական կազմածներու եւ բնախօսական դործաւնութիւններու պէս, հոգեկան վիճակները նոյն են ամէն մարդու մէջ, բայց ոչ միեւնոյն աստիճանով եւ ուժղնութեամբ : Պէտք է կտրգանք անոնց արտայայտութիւնը այնպիսի գործերու մէջ որ խորունկ թափանցողութեամբ մը կ'իրականացնեն, կ'ամբողջացնեն եւ կը կատարելագործեն ինչ որ իրեւ սերմ եւ բողբոջ ունինք մեր մէջ : Ահա հանճարներու, մեծ բանաստեղծներու ընթերցման օգուտը, Կեանքը մարդկութեան համար եղերախաղի վայրկեաններ կը յօրինէ, սրտայոյզ ետադարձութիւններով, օրոնց հանդէպ հանդիսատես ու դերակատար միանգամայն կ'ըլլան մարդիկ, բայց պէտք է Շէքսպիրի

առումները վերծանել, տեսնելու համար թէ այն կիրքը որ քու մէջ լուսնալիր գիշերուն մը վճիտ լճակին մէկ բլրեղ պղպշակը, կամ մեղմիկ վէտվէտունն է, հոն, Համլէթին մէջ, լայնատարած ովկիանի մը ամեհի, լեռնաբերձ կոհակներուն տհեղ մռնչիւնը, համատարած ծփանքը եւ լայնափնովի բացուածքն է : Բնութեան մէկ երանգաճոխ դաշտանկարին, լեռան մը շնորհագեղ կոնին կամ ծովու մը լազուարթ հայելիին առջեւ հիացիկ կանգ կ'առնենք երջանիկ յուզումներով, սակայն Կէօթէի, Անտէրսընի, Էր քոնիթ աը Լիլի, Սիւլլի Բրիւտտի մէջ պէտք է տեսնենք փեղեքին ցոլացումը, ուր բանաստեղծի հոգին կը տարածուի լերան եւ ծովուն անհունութեամբ : Կերպով մը իրերու մէջ կը լսուի, կը խառնուի, զեպիւրին հետ կը դաշնակաւորի, արեւին ճառագայթներուն հետ կը թրթռայ, երկնից լուսաւորներուն հետ կը շողայ, բնութեան անհուն կեանքին կը մասնակցի, ինքզինքը ասոնցմով արտայայտելով :

«Սիրաւ, կ'ըսէ Բաագալ, ի բնէ կը սիրէ արեւելեական էակը» : Մարդը ընդաբոյս համակրութեամբ մը կը հետաքրքրուի իր նմանին կեանքովը : Ո՛րքան մշակուի իր անհատականութիւնը՝ ա՛յնքան ընկերական էակ մը կը դառնայ ան : չարժուէ, լուսաւոր կեդրոն մը որ իր շուրջը կը ծաւալի եւ կը ճառագայթէ : Զարգացած եւր կընդլայնի եւ կը ջանայ վայելել ամբողջ երկիրը, բովանդակ կեանքը : Ամբողջ մարդկութիւնը հասկնալու եւ սիրելու այդ բաղձանքը, կամ ճշգիւ, այդ կարողութիւնը անհրաժեշտ պէտք մըն է մասնաւոր բարձր միտքերու համար :

Ուստի, Exotismeի երեւոյթը, կամ այսպէս ըսենք, չըջանը՝ ընդարձակութեան, աճումի եւ կենսականութեան նշան մըն է գրականութեան մը մէջ, որ լաւագոյն եւ թարմ անունդի մը փոխառութեանը կը կարօտի, ապա թէ ոչ, տոհմային բայց այլա՛մերժ գրականութիւն մը, ինքն իր մէջ ամփոփուած, միայն իր հիւթովը անած՝ կը տըժդուրի եւ կը խամրի ծիրախատէ : Արդարեւ, պէտք է ըլլալ իր ժամանակի եւ իր միջավայրի արտադրութիւնը, պէտք է մնալ նոյն ինքն եւ իր երկիրէն, բայց գրականութեան

մէջ տոհմային ոգին ընդլայնելու եւ աւելի մարդկային ընելու համար՝ ճիւղացնելու է զայն նոր եւ առողջ տարրերով, որոնք մըտաւորական բեղմնաւորող ոյժ մըն են :

Արդի մտքին ձգտումն է ճանչնալ իր բնական մոլորակին մակերևոյթը, ուսումնասիրել ժամանակակից մարդը իր բոլոր հատկանշանքներուն, իր բարձր եւ ստորին խաւերուն մէջ . մինչ ասկէջ առաջ բարձր եւ նըշանաւոր միտքերն անգամ — Ռասին, Լապլէս, Լաֆոնդէն, Լա Ռոշֆուգո — առանձնաշնորհալ գասակարգերու մարդը, իմ մայրաքաղաքին մէջ ապրող աշխարհիկ մարդը կը ճանչնային, Սակայն զգացման պէտքերը մեծնալով, ա՛յ սահմանափակ եւ սովորամոլ գրականութիւն մը չի գոհացներ միտքերը : Միայն Exotismeը բնութեան աւելի կատարեալ նկարչութիւն մը կուտայ, աւելի մեծ բացումք մը մարդկութեան վըրայ, հանդիսատես կ'ընէ զմեզ երկրագունտի տարրեր կէտերուն, զանազան կրօնքներու, բարոյականներու, բարքերու եւ մարդկային էակներու խորունկ զանազանութեան մը :

Հայ համայնքը զեռ հասած չէ այդ մըտաւոր բարձրութեանը որ իր ապրած հորիզոնին բոլոր կէտերը հետազօտելով եւ նիւթերը սպառելով, գրական եւ գիտական լայնագոյն ուսումնասիրութիւններու ձգտելի Մեր մտաւոր սահմանները շատ հունաւոր են, գրեթէ նմանողութեան չըջանէն չինք ելած, Գրական ոչ մէկ սեռ տակաւին իր ուրոյն կալուածը ունեցած է մեր մէջ, Գիտական մեթոտը եւ մշակութիւնը իրենց հեղինակաւոր ներկայացուցիչը չուղջունեցին, այլ առաւել կամ նուազ նմանողական կերպն է զոր ի գործ կը դնեն մեր գրական դէմքերը : Այսու հանդերձ, հայ ազգանդը ճօն եւ ընդունակ է մտաւորական բարձրութիւններու հասնելու, միայն թէ պէտք է մշակել եւ կազմակերպել զայն :

Յրանաական գրականութիւնը իր արեւելեական յատկանիւծով ո՛չ միայն մեր, այլ նաեւ ուրիշ առաջնակարգ ազգերու գրականութեան վրայ ալ իր ազդեցութեան բաժինը ունեցած է : Այդ ազդեցութիւնը բոլորովին ապարդիւն եւ աղետաբեր եղած չէ մեր զարգացման համար, ինչպէս կ'ենթադրեն ոմանք :

Առանց սակայն արհամարհելու ֆրանսական լաւագոյն արտադրութիւնները, որոնք միշտ առատ են ճաշակաւորներու համար, ուշադրութիւննիս զարձնենք նաեւ հիւսիսի գրականութեան վրայ, անկիւս-սաքսոն լուրջ եւ հիւթալից գործերուն վրայ, ուր բարոյական կատարելութեան հոգածութիւն մը կը նշմարուի, եւ ուր ցուցադրուած ճշմարիտ իրականութիւնը իր թելադրած զգացումներովը կը մեծցնէ ընթերցողին հոգին : Մեր գիտունները, գրագէտները, հրապարակագիրները թո՛ղ կարող ըլլան իւրացնել օտար գրականութիւններէն ինչ որ մարդկային է եւ աղնուագոյն . ճաշակել հոգիին բոլոր գեղեցկագոյն արտայայտութիւնները, եւ այդ օտար տարրերու խառնուրդը բազմակցութիւն մը ընելով, ճակատաբաց կարեւորան ըսել — Ատաղճները թէեւ կը ստանանք ամէն տեղէ, բայց արձանը մեր գործն է :

ՀԱՐՄԱԿ

Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

ՆՈՐԸՆՏԻՐ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Անձկութիւնը որ կը տիրէր, նախորդ շաբթուն, թէ՛ Պատրիարքարանի եւ վարչական շրջանակներու մէջ եւ թէ՛ լրագրութեան ու հասարակութեան մէջ, Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Ամեն. Տ. Սահակ Սրբազանի պատասխանին յապաղման առթիւ, փարատեցաւ վերջապէս, Երկուշաբթի օրաթերթերը հրատարակեցին Երուսաղեմէն Օրմանեան Ս. Պատրիարք Հօր հասած հետեւեալ հեռագիրը որ անհետացուց ամէն տարակոյս՝ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի ընդունելութեան ու հաւանութեանը մասին .

ԵՐՈՒՍԱԼԵՄ, 19 Հոկտեմբեր

Առ Ամեն. Պատրիարքութիւն Հայոց Կ: Պոլիս

« Շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձեր « Սրբազնութեան հեռագրին համար, որով « Սոսյ Կաթողիկոսութեան ընտրուելս կը ծա-

« նուցանէիք: Եւ կը շնորհաւորէիք: Այս նոր
« պաշտօնիս ու զիրքիս պարտականութիւն—
« ներք յաջողութեամբ կարենալ կատարելու
« համար՝ կ'ապաւնիմ Աստուծոյ օգնութեան,
« Վեհ. Կայսեր բարեհաճութեան, Կայսերա-
« կան Կառավարութեան բարեացակամու-
« թեան ու հովանաւորութեան, եւ Ձեր
« Պատրիարքութեան եւ Ազգիս յարատեւ
« աջակցութեան: »

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տ. Սահակ Ս. Կաթողիկոս հեռագրով պա-
տասխանած ու շնորհակալութիւն յայտնած է
նաեւ Երուսաղէմի Պատրիարքական Փոխանորդ
Երէցեան Սրբազանի շնորհաւորական հեռագ-
րին, Կ. Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ
Սրբազանին եւ ուրիշ Եկեղեցական Հայրք:
Նոյնպէս, հետեւեալ հեռագիրն ուղղած է
Պատրիարքարան, ինչպէս ժողովին կողմէ
ուղղուած շնորհաւորական հեռագրին ի պա-
տասխան: »

« Սոյն Կաթողիկոսութեան ընտրուելուն
« ամօթիւ, ի դիմաց ինչպէս ժողովոյ ի պաշտօ-
« նէ շնորհաւորութիւն հեռագրած էիք, որ-
« ուն համար կը յայտնեմ իմ գոհունակու-
« թիւնս թէ՛ Ձեզ եւ թէ՛ ինչպէս ժողովոյ
« անդամներուն, եւ ասկէ առաջ ուղղած հե-
« ռագրոյս մէջ պարզած զգացումներս կը
« կրկնեմ: »

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Երուսաղէմի Ս. Պատրիարք Հայրն ալ հե-
տեւեալ հեռագրով պատասխանած է Օրման-
եան Ս. Պատրիարք Հօր հեռագրին: »

« Սահակ Արքեպիսկոպոսին Կիլիկիոյ Կա-
« թողիկոս ընտրուելուն ամօթիւ, Ն. Սրբազ-
« նութեան սոյն պաշտօնին կատարեալ ար-
« ժանաւորութիւնը յիշելով՝ շնորհաւորած
« էիք նաեւ մեր Միաբանութիւնը: Ձեր այդ
« հեռագրին համար գոհունակութիւն յայտ-
« նելով, կ'ապահովեմ թէ Սահակ Արքե-
« պիսկոպոս ընտրուած է Կաթողիկոսութիւնը
« եւ պիտի շարունակուին այն ամէն զիւրու-
« թիւնները որոնք կարեւոր են Եկեղեցւոյ
« շահուն համար: »

Պատրիարք Երուսաղէմի
ՅԱՐՈՒԹԻՒՆ


Կիլիկիոյ նորընտիր Ս. Կաթողիկոսին հա-
ւանութիւնն հաստատող այս հեռագիրներուն
հրատարակութիւնը ընդհանուր կերպով ա-
ռաջ բերաւ այն ուրախութիւնը որ արտայայ-
տուած էր ընտրութեան արդիւնքը ծանուց-
ուելու պահուն, եւ տարակոյս չիկայ որ նոյ-
նը եղած է նաեւ տպաւորութիւնը Կիլիկիոյ
ամէն կողմերը: Ս. Պատրիարքը հեռագիր մը
ուղղելով Ստանա՝ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմ-
րիքճեանի, ծանոյց թէ զանազան թիմերէ
եկող պատգամաւորները այլեւս կրնան իրենց
տեղերը վերադառնալ: Տ. Մովսէս եպիսկ.
Ն. Սահակ պիտի մնայ՝ մինչեւ նորընտիր Ս.
Կաթողիկոսին ժամանումը: Արեւելք արձա-
գանք կ'ըլլայ Պատրիարքարանի շրջանակ-
ներուն մէջ շրջած զրոյցի մը, թէ Կեզր.
Վարչութեան կողմէ պատգամաւորութիւն
մը պիտի կազմուի՝ եկեղեցականներէ ու աշ-
խարհականներէ բաղկացած՝ Տ. Սահակ Ս.
Կաթողիկոսին ուղեկցելու համար մինչեւ
Սիւս ուր ներկայ պիտի գանուի օծման մեծա-
հանդէս արարողութեան: »

— Կաթողիկոսական ընտրութեան մաս-
նակցող 45 պատգամաւորները, որոնք 62
ձայն կը ներկայայնեն, շնորհակալութեան
զիր մը ուղղած են Ազգ. Կեզր. Վարչութեան
Ս. Նախագահին: Այս ուղեւորին մէջ՝ պատ-
գամաւորները կը խնդրեն Օրմանեան Ս. Պատ-
րիարքէն, որ հաճի իրենց երախտագիտական
րուսն զգացումներուն եւ ջերմագին բարե-
մաղթութիւններուն թարգման կանգնել յոտս
Կայս. Գահոյից: Յետոյ շնորհակալութիւն կը
յայտնուի Ատանայի կուսակալ Վսեմ. Պահրի
փաշայի, որ բարեհաճեցաւ սատարել Կաթո-
ղիկոսական ընտրութեան գործին յաջողու-
թեան, ամէն զիւրութիւններ ընծայելով եւ
թարգման հանդիսանալով իր Օգոստոսիան
Վեհապետին բարի տրամադրութեանց: Պատ-
գամաւորները շնորհակալութիւն կը յայտնեն
նաեւ Ատանայի Մէքթուպճի պէյին, որ ի-
սպէս կատարեց իր պաշտօնը, իրեն ներ-
կայացուցիչ Կայս. Կառավարութեան: »

Այս ամէնէն վերջը, պատգամաւորները
իրենց սրտագին երախտագիտութիւնը կը
յայտնեն Կեզր. Վարչութեան կրկին ժողով-
ներու անդամներուն, եւ մասնաւորապէս »

նոր Ս. Նախագահին, որ յաջողեցաւ փայ-
լուն ելք մը տալ երկար տարիներէ ի վեր
առկա մնացած խնդրի մը: Ծնորհակալու-
թեան լաժիքն մըն ալ կը հանուի Պատրիար-
քարանի պատուիրակին՝ Տ. Մովսէս եպիսկ. ի,
որ իր վարչական փորձառութեամբ յաջողե-
ցաւ պատուաւոր ելք մը տալ ընտրական
գործին:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



1. Աշխարհագրութիւն պատկերագարդ. Տարրական Ա.
եւ Բ. տարիներու: Արրահամ Յ. Հայրիկեան. տպ. Ն. Կ.
Քէպէրեան. 1902. — 2. Պատկերագարդ նոր Աշխար-
հագրութիւն. Բ. մաս. աշխարհագրութիւն Օսմանեան
կայսրութեան. Հրանտ Ս. Խանճեան. Նախակրթութեան
դասընթաց: Կ. Պոլիս. Գրատուն Նշան-Պապիկեան. 1902.
— 3. Առեւտրական-Տնտեսական աշխարհ. Պատրաստեց
Կ. Ս. Թուխանեան. Իզմիր Տպ. Մամուրեան. 1902:

Բ.

Մեր Կազմական Կանոնադիրքին մէջ չեմ
զիտեր թէ նախալրթութեան դասընթացքին
որ տարւոյն յատկացուած է Օսմանեան Կայս-
րութեան աշխարհագրութեան յատուկ կեր-
պով աւանդուիլը, բայց այս խնդիրը լուծել
այն դաստառներուն թողլով որոնք այս դա-
սադիրքին վրայէն պիտի դասախօսեն, կ'անց-
նիմք ուն գիրքին որուն հեղինակը արդէն
անձամբ մը չէ՝ նոյն ճիւղին համար պատ-
րաստած մէկ ուրիշ գործովը:

Խանճեանի գիրքը՝ Հայրիկեանի գրքին
պէս Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած
ըլլաւ որ եւ է հետք չի կրեր: Ասոր համար
չիտակը ես շատ չեմ զարմանար, որովհետեւ
հակառակը աւելի զարմանալի պիտի ըլլար:
Թո՛ղ Ուսումնական Խորհուրդը վկայական
լուծեցող ուսուցիչներուն հետ՝ չվաւերացուած
դասագիրքերն ալ վարժարաններէն վտարելու
աշխատի... անոնք կան եւ մնան յաւիտեան:
Եւ անկեղծութեան համար պէտք է ըսել
թէ բոլոր չվաւերացուած դասագիրքերը ան-

պիտան եւ անարժէք բաներ չեն, այլ շատ
անգամ վաւերացուածներէն ալ նախադասելի:

Եթէ կ'ուզէք, Խանճեանի Աշխարհագրու-
թիւնը անոնց առաջիններէն մէկը կրնաք
համարել: Պէտք է ըսել թէ հեղինակը բա-
ւական խնամքով դասակարգած է իր գործը
եւ մասնաւոր դերակշիռ առաւելութիւն մը
տուած է անոր՝ տնտեսական մաս մըն ալ ա-
ւելցնելով:

Նախ կը խօսի, ինչպէս վայելէ, Օս-
մանեան Պետութեան բնական մասին վրայ,
բայց դժուարագար Ափրիկեան Թուրքիոյ ծո-
ցերը, ջրանցքները եւ թերակղզիները յիշելէ
յետոյ (էջ 10) կը մոռնայ նոյն մասին լեռները
ու՝ գետերը յիշել, բան մը զոր ըրած է այլ-
ուր (էջ 124—125): Պէտք էր այդ ուրիշ
տեղ ըրածը առաջ անցընէր եւ իր կարգին
զրէր:

Յետոյ կ'անցնի քաղաքական աշխարհագ-
րութեան եւ բաւական տրամաբանական կար-
գով մը ցեղերը եւ կրօնքները, վարչական
զանազան բաժանումները թուելէ՝ յետոյ կը
խօսի Եւրոպական, Ասիական ու Ափրիկեան
Թուրքիոյ կուսակալութեանց վրայ, անոնց
իւրաքանչիւրի վարչական բաժանումները
ցոյց տալով ինչպէս նաեւ գլխաւոր քաղաք-
ները: Բայց պէտք է զիտել տալ թէ այս
մասին մէջ զիտողութեան առարկայ է հարգ
մը քաղաքներու ընտրութիւնը, Գաղաքներ
կան որոնք կրնային չյիշուիլ եւ յիշուած են,
քաղաքներ ալ կան որոնք յիշուածներուն
բաղդատմամբ պէտք էին յիշուած ըլլալ եւ
չեն յիշուած: Չպիտի ուզեմ մանրամասնու-
թեանց իջնել եւ մէկիկ մէկիկ ցոյց տալ իւ-
րաքանչիւր յիշելի եւ մոռցուած, յիշուած
եւ զանց առնելի քաղաքները, իւրաքանչիւր
ոք ինքիւմէն պիտի գտնայ անոնցմէ: Մէկ
օրինակ մը արդեօք բաւական է: Էտիրնէի
կուսակալութեան մէջ Միտիա, Չորլու եւ
Եէնիճէ յիշուած են, առանց յիշուած ըլլա-
լու Լիւլէ-Պուրկազը որ անոնցմէ ոչ մէկէն
փոքր եւ նուազ կարեւոր է: Ուրիշ ասոնց
նմաններ եւս բազմաթիւ են:

Գործին Զ. եւ վերջին գլուխը կը կազմէ
Օսմանեան Պետութեան Տնտեսական Աշխար-
հագրութիւնը, — այս երկասիրութեան ամենէն

պատուաբեր եւ ամէնէն չահեկան մառը որ նոյն իսկ գրքին հրատարակութեան արդարացումը կը բովանդակէ իր մէջ : Այս մասը բաւական ալ ընդարձակ լռեցուած է եւ նոյն իսկ պիտի համարձակիմ ըսել թէ գործին ընդհանուր գիծերուն հետ անհամապատասխան ընդարձակութիւն մը առած է : Սկզբունքով բոլորովին համամիտ ըլլալով քաղաքական աշխարհագրութեան անտեսականէն անջատ մաս մը կազմուելով աւանդուելուն՝ փափաքելի է սակայն որ այս երկու մասերը չհակասեն իրարու :

Ինչ որ անտեսականին մէջ բացատրուած է ըմբռնելի ըլլալու համար ուսանողին՝ քաղաքականին օժանդակութեան կը կարոտի : Կարդ մը լեւրքերու արտագրութեան տեղերը , ճարտարարուեստներու վայրերը , վերջապէս ամէն բան որ անտեսականի մէջ բացատրուած է՝ տեղերու կապուած են եւ այդ տեղերուն դիրքը եւ տեղը քաղաքականին կը պատկանին : Խանձեան անտեսականին մէջ կը խօսի քաղաքներու վրայ որոնք գրքին առաջին մասին մէջ երբեք յիշուած չեն եւ ասիկա հակասութիւն մըն է որ երկու մասերը իրարու անհամապատասխան կը դարձնէ : Գէթ պէտք էր , երկու մասերը իրարու հաշտեցնելու համար , փոխանակ յիշելու մանր քաղաքները որոնք քաղաքական աշխարհագրութեան ծրագիրէն դուրս կը մնային՝ ընդհանրացնելով միայն անոնց կուսակալութիւնը եւ եթէ աւելի մանրամասնել կուզուի ստնճագը , այն ատեն երկու մասերը իրարու հակասած չպիտի ըլլային :

Այս դիտողութիւնը ընելէ յետոյ՝ պզտիկ պատմութիւն մը , եթէ կը հաճիք :

Գրքին 16րդ էջին վրայ Ասիական Թուրքիոյ բնական աշխարհագրութեան վրայ խօսած ատեն՝ հեղինակը երկու մեծ զեւեերու վրայ կը խօսի՝ որոնք իրարու հետ միանալով կը կազմեն Շաղ-էլ-Արապը եւ այդ երկու զեւեերը կ'անուանէ Տիճլէ եւ Եփրատ : Իսկ Տնտեսական Աշխարհագրութեան մէջ հաղորդակցութեան միջոցները թուած ատեն՝ Արեւելեան Թուրքիոյ հաղորդակցութեան իբր սքանչելի միջոցները ցոյց կուտայ երկու զեւեերը որոնք դարձեալ իրարու կը միանան

եւ կը կազմեն Շաղ-էլ-Արապը եւ միայն այս անգամ կը կոչուին Տիգրիս եւ Եփրատ , եթէ Տիճլէն ունէր նաեւ Տիգրիս անուանակոչութիւն մը , ինչո՞ւ չէ յիշուած գրքին բնական մասին մէջ , ասիկա քիչ մը զարմանալի է մեզի համար եւ չփոխեցուցիչ ուսանողին համար :

Նոյնպէս անտեսական աշխարհագրութեան մասին մէջ նաւահանգիստներու կրկնութիւնը (էջ 173-188) աւելորդ է : Քաղաքական մասին կը պատկանի այդ թուումը եւ հոն պէտք է տեսնուած ըլլայ , եւ արդէն ինչ պատճառ կայ որ ծովեզերեայ քաղաքները յիշուած ատեն՝ ցամաքային վաճառաշահ քաղաքներն ալ չյիշուին եւ ասով քաղաքական աշխարհագրութիւնը չկրկնուի Տնտեսականին մէջ վերստին :

Վերջացնելէ առաջ երկու խօսք ալ պատկերներուն համար , Դրուած պատկերները ամէնքն ալ գրեթէ հին աշխարհագրութեանց մէջ գտնուածներէն տարբեր են , եւ բաւական ալ խնամուած . բայց դիպուածական եւ անդասակարգ կերպով զետեղուած , տեղ տեղ աշխարհագրութեան սահմաններէն դուրս ելած եւ տարօրինակ հանդամանք մը առած են : Անոնցմէ ոմանք ինչո՞ւ համար գիրքին մէջ գրուած ըլլալուն մեկնութիւնը չկրցանք գտնել , ի պատիւ հեղինակին պէտք է ըսել թէ լեզուն կանոնաւոր աշխարհարար մըն է եւ ի պատիւ հրատարակիչներուն պէտք է խոստովանիլ թէ այս գիրքին հրատարակութիւնը անպէտ եւ անօգուտ ձեռնարկ մը չէ :

Փափաքելի է որ Նշան-Պապիկեան գրաստան հրատարակչական կրկին ձեռնարկները՝ ըլլան անոնք զպրոցական սերունդի մը օգտին կամ գրական աշխարհի զարգացման համար՝ պէտք եղածին պէս քաջալերուին չցամքեցնելու համար այն կորովի եւ աշխատութեան սիրայօթար տրամադրութիւնները զորս աղոց դաստիարակութեան եւ մեր գրականութեան սիրոյն համար յանձն կ'առնեն անոնք :

* * *

Մեր առաջադրած նպատակին հասնելու համար բնական էր որ այս դասական գործերէն անմիջապէս յետոյ անցնէինք Թուրքիոյ « Առեւտրական-Տնտեսական Աշխարհ » անուն գործին՝ որ դասական գործ մը չէ բոլորովին :

Բայց ներեցէք որ փակադիծ մը բանամ : Անցեալ շարաթ կ'ըսէի թէ երեք աշխարհագրական գործ մէկէն կ'երեւան , կը սխալիմ եղեր , որովհետեւ Գրիգոր Մարգարեան , Տիգրան Պօղաճեան , եւ Ամիրիկեան վարժարանի

մը բրօֆէսէօրը մէյմէկ աշխարհադրութիւն
եւ հրատարակած են եղեր, զորս տեսած չեմ
դեռ :

Այս երեք վերջինները դարձեալ դասա-
գիրքեր են եւ անոնց վրայ ո՛չ այսօր եւ ո՛չ
ալ վաղը չպիտի ուզեմ խօսիլ, որովհետեւ ես
արդէն աշխարհադրութեան գիրքեր թղթա-
տելէ կշտացայ եւ գուցէ ընթերցողս ալ ա-
նոնց գրախօսականները կարդալէ զգուեցուցի
Ասկէ զատ՝ անշուշտ պիտի ներէք որ պզտիկ
խոստովանութիւն մը ընեմ ձեզի, առանց վա-
րանելու յայտարարելով թէ մասնաւորապէս
անոր համար պիտի խուսափիմ անոնց վրայ
խօսելէ որովհետեւ անոնցմէ մէկուն հեղի-
նակը՝ Գրիգոր էֆ. Մարգարեան՝ աշխարհա-
դրութեան ուսուցիչս եղած է եւ ամէն մար-
դու գործ չէ, շիտակը, իրմէ սովորիլ եւ իրեն
ծախել :

Թերեւս սորվեցուցած ըլլալն ալ կը զղջայ,
ինչ որ չպիտի ուզէի որ միտքէն իսկ ան-
ցընէր . . .

Ս. ԱՆԳԵՂԵԱՅ

Բարգեճ վարդապետս զկսած է գեղեցիկ
թղթածներու շարք մը Արեւելի մէջ, Խո-
սիով Աստուածաշունչի նոր սպագրութեան
վրայ, որուն ձեռնարկուած է էջմիածնայ
մէջ, կը շեշտէ այս հրատարակութեան կա-
ռուութիւնը ու կը թուէ անոր առաւելու-
թիւնները, հարցնելով, սակայն, այս առ-
թիւ, թէ ի՞նչ պիտի ըլլայ ծաշոցը, Հայ-
եկեղեցիի մէջ ամէն օր ու ամէն տեղ կար-
դացուած Ս. Գրոց այդ օրինակը, Արեւելի
խաղաղութիւնը իր կողմէ կ'աւելցնէ թէ Տ.
Մկրեան Հայրը ձեռնարկած է արդէն ծաշոցի
աշխարհաբար թարգմանութեան :

ԸՆԴԱՐՁԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԿ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստացանք Բրոֆ. Յ. Յ. Մանիսաճեան
էֆ. ի երկասիրած Ընդարձակ պարկերազարդ
Աշխարհագրութիւնը, Մասթէոսեան ընտիր
տպագրութեամբ ու շքեղ կազմով, Կը բո-
վանդակէ 59 պատկեր եւ 12 քարտէս, խը-
նամակ եւ մաքուր ամէնքն ալ, Դին 14 դրշ :
Դպրոցներու գործածութեան նպատակաբա-
նար դասագիրք մըն է, մեծապէս օգտակար
ըլլալու սահմանուած :

Վաճառման կեդրոնատեղին է՝ Կ. Պոլիս,
Մասթէոսեան վաճառատունը եւ Մարզուան
հեղինակին քով :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ԵՒ

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐ

(«ՓՈՒՆՁ» ԼՐԱԳՐԻՆ ՀԵՏԵԻՈՂՈՒԹԵԱՄԲ)

Հաշիւ եղած է որ Լոնտոնի բնակիչները
օրը 3,618,414 օձիք կը փոխեն :

— Երկիրը արեւին շուրջը կը դառնայ
եղեր :

— Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է :

— Բարիգի թաղարոններուն մէջ վառուած
լոյսը եւեքարական է եղեր :

— Հարաւային Ամերիկայի սեւամորթները
երբեք թուտաւ չեն գործածեր :

— Երբ Պրիմարք մեռաւ, բժիշկները հաս-
տատեցին թէ այլեւս չէր կրնար ապրիլ :

— Տուվրէն՝ Բա-աը-Քալէ երթալու հա-
մար անպատճառ ծովէ անցնելու է եղեր :

— Պարսկաստանի մէջ ձիերը չորս ոտքով
կըլլան եղեր :

— Գերմանացի մը հաշիւ ըրած է որ Ժա-
մը 4 էն մինչեւ 5 . . . ճիշտ 60 վայրկեան է :

— Քրիստոս երբ մեռաւ 33 տարու էր :

— Բարի արարէք ատեղեաց ձերոց :

— Ֆրանսայի արտաքին գործոց նախա-
բար Պ. Տէլքասէ երկուշաբթի օր մը ծնած է :

— Աղեքսանդր մեծի Ժամանակ դեռ ղը-
մօնքուար Ժամացոյցները հնարուած չէին :

— Անթիքիոնը զլիւր ցաւի ալէկ է եղեր :

— Մօզամպիքի մէջ ամուսնութիւն մը կա-
տարուելու համար էրիկ մարդ մը եւ կնիկ
մարդ մը իրարու հետ կը պսակուին եղեր :

— Վօլթաի թիկերը Վօլթաի անունով Վօլ-
թա կը կոչուին :

— Քաֆր-էլ-Չաեաթի կամուրջին երկայ-
նութիւնը 214 մէթր է :

— Զուլուէնտի վայրենիները օ Տը Քօջօնը
չեն գործածեր եղեր :

— Աստուած տիեզերքը վեց օրուան մէջ
ստեղծեց :

— Տէր, մի՛ դարձուցաներ զերեսս քո
խինէն :

— Հաճի ըլլալու համար Երուսաղէմ կեր-
թան եղեր :

— Բորթուքալի մայրաքաղաքը Լիզպու-
նա է :

— Բարիզի Պօն Մարչէն ցերեկները կը
բանան եւ գիշերները կը գոցեն :

— Սկանաինավիոյ բօխները վերջապէս
հաստատուի են եղեր որ , ամուրի մը եթէ
կարգուի՝ կրնայ մէկ կամ մէկէ աւելի զա-
ւակներ ունենալ :

— Մէկ օրը 24 ժամ է :

— Տիկին Սառա Պէռնար բնաւ դուրս չեւ-
լեր եղեր , մինչեւ որ գուլպաները չհագնի :

— Երկուք երկուք ալ չորս կընէ եղեր :

— Մատակասքար կղզիին չորս կողմը ծով
կայ :

— Նարուէոն Բօրսիքայի մէջ ծնած է :

— Հօլովէյի դեղահատերը մարդուս կեանք
կուտան եղեր : Թայլոզ կըսէ թէ՝ Պուսոյ մէջ
հայ թերթ մը կայ եղեր որ այդ հապերուն
ծանուցումը դնելով միայն՝ 23 տարիէ ի վեր
կապրի կոր եղեր :

— Թայլոզի այս ըսածին կը վկայէ

ԳԲԻՋԱՆԹԻՄ.

(Շարունակելի . . . si le cœur vous en dit)

Շ Ի Բ Կ Ա Թ Ի Ն Ը

(ՀԷՒԵԱԹ)

Հին , հին , նախապատմական դարերու
մէջ՝ երկտասարդ մը ու կայս մը նշանուած էին :

* * *

Այն ատեն , զրամական աղտոտ հաշիւներ,
փառասիրական նկատումներ , կեղծիքներ ու
նախապաշարումներ չէին պղծեր , չէին խան-
գարեր ամուսնական միութեան մաքրութիւնն
ու ներդաշնակութիւնը՝ որ սիրոյ , զուտ սըր-
տաբուխ ու անբիծ սիրոյ վրայ էր հիմնուած :

* * *

Կը սիրէին ուրեմն զիրար , այս երկու
նշանածները , եւ սովորականէն դուրս , անեղբ
ու անյատակ խանդով մը կը սիրէին ասոնք :

Երջանիկ էին , ու պիտի ըլլային ալ դեռ ,

* * *

Օր մը սակայն — սե՛ւ օր մը — երբ երի-
տասարդը լերան մը կողէն վեր կը մաղցէր
իր ոչխարներուն հօտին ետեւէն , լպրծուն
ժայռի մը վրայէն ոտքը սահեցաւ ու թաւա-
ղւոր ինկաւ ձորին մէջ : Դիշերը , ուշանալուն
համար զինքը փնտռելու եկողները , ինկած
տեղը դտան զինքը զգաղիւրկ ու տուն փո-
խադրեցին :

* * *

Դեղ ու դարման չինայուեցաւ :

Նշանածը — հէք ա՛ղջիկը — քա՛նի քա՛նի
գիշերներ անքուն հսկելով ու աղօթելով ան-
ցուց իր սիրելւոյն սնարին քով : Ի՛նչ սըր-
տաղին պաղատանքներ սլացան իր անբիծ
լանջքէն գէպ ի Աստուած , խնայելու համար
անոր զօր կը սիրէր , կը պաշտէր Իրմէ ետքը,
զրեթէ Իրեն չափ , չփլցնելու համար չէնքը
այն երջանկութեան զոր կառուցած էին իրենք
այնքան առնէն ի վեր :

* * *

Անօգո՛ւտ սակայն . Աստուած կարծես թէ
որոշած էր խուլ ըլլալ այդ պաղատանք-
ներուն :

Դիշեր մը , ամբան լուսաղարդ գիշեր մը ,
վիրաւորը մահամերձի հուսկ ժպտով մը
ժպտեցաւ իր սիրեցեալին ու .

— Ահա՛ ես կերթամ հողի՛ս , ըսաւ , սա
լոյսէ բիծելով ծածկուած սեւ քօղին ետեւ
պիտի սպասեմ քեզի . հոն՝ երկինքին մէջ՝
պիտի վայելենք այն երջանկութիւնը զոր բաղ-
դը հոս զլացաւ մեզի :

Եւ աչքերը փակեց մեղմ հառաչանքով մը :

* * *

Աղջկան սրտին մէջի սիրոյ անյատակ ան-
դունդը , վշտի անհունութեամբ մը լեցուեցաւ :

Ապրի՛լ առանց անոր , ո՛հ , ո՛չ , չէր կրնար :
Եւ ուղեց որ մեռնի շուտ մը ինքն ալ ,
չառ չսպասցնէ իր սիրեցեալը հոն , լոյսէ
բիծելով ծածկուած սեւ քօղին ետեւ :

Ասոր համար խանդաղին աղօթեց Աստու-
ծոյ՝ ինչպէս աղօթած էր իր սիրելւոյն կեան-
քին համար :

* * *

Մահը չէր դար սակայն :

Աստուած որոշած էր կարծես մտիկ չընել
իր ազօթքներուն :

Ինչ տանջանք կեանքը իրեն համար :
Դիտնալ թէ հոգիէն աւելի սիրածը կըսպասէ
հոն վերը , լոյսէ բիծերով ծածկուած սեւ
քողին ետեւ եւ չկարենալ հոն երթալ . . .
զայն երջանիկ ընելու համար հոն գէթ . . .

* * *

Դիշեր մը հոգին , իր կոյս հոգին , սիրա-
բորբոք ու ժպնութեան մը մէջ խզեց զինքը
մարմնոյն կցող կապերը բոլոր ու վեր , գէպի
լուսադարձ երկինքը խոյսցաւ :

* * *

Ճամբայ չկար սակայն իրեն համար այդ
քողէն ներս թափանցելու , քանի որ դեռ
ժամանակը չէր , քանի որ Արարչին հրամա-
նով չէր գացած հոն : Անանցանելի պատուար
մըն էր իր առջեւ երկինքին սահմանը :

* * *

Չլուսահատեցաւ սակայն : Սէրը գերմարդ-
կային այդ մը սուտաւ իրեն :

— Ո՛հ պիտի գլեմ այս պատուարը , պո-
ռաց : Ու սկսաւ այդ անհուն քողին հիւս-
կէնները քակել , անոր խաւերը բանալ անվը-
հատ յամառութեամբ մը :

* * *

Աստուած տեսաւ : Իր դրած մէկ պատ-
ուարը կը փորձէր անցնիլ այդ էակը . եւ սա-
կայն բարկութեան շանթը չպայթեցուց այդ
աղջկան վրայ , անոր համար որ անբիծ ու
մաքուր սիրոյ մը լոյսն էր զինքը այդ վերելքին
մղողը : Եւ իր արարքին մէջն էր իր չըմեղանքը :

* * *

Տարիներ ու տարիներ ճգնեցաւ խեղճ աղ-
ջիկը այդ լոյսէ բիծերով ծածկուած քողին
մէկ պզտիկ մասը քիչ մը մաշեցնելու համար :
Եւ թերեւս իր ձեռնարկին անկարելիութեանը
առջեւ պիտի վիսաւէր . սակայն իր սիրոյն
մեծութիւնը Աստուծոյ դուրսը չարժեց վեր-
ջապէս ու զայն ներս առաւ , իր սիրահա-
րին քով :

* * *

Յետոյ Աստուած շուղեց մաքուր սիրոյ
կրակով վառուած հոգիի մը դիւցազնութեան
այդ նշանը ջնջել երկինքին վրայէն . չնորոգեց
սեւ քողին վրայ աղջկան այնքան ճիգերով
մաշեցուցած տեղը , որ ճերմկորակ գիծ մը
կազմած էր , սեւ հագուստի մը մաշելով ճեր-
մեղած տեղերուն պէս :

* * *

Եւ տաիկա , լոյսէ բիծերով կէտկիտուած
քողին այդ մաշած տեղը , մենք ծիրկաթին
կը կոչենք հիւս :

ՓԱՅԼԱՆ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐՔԵՐԷՆ

— 00000 —

Անգլիական Հանդեսի մը կը փաղեմք սա
յոյժ շանեկան յոգուածը որ կը պատմէ քե
Միացեալ Նահանգաց Նախագահը ինչպե՛ս
եւ ի՛նչ տեսակ ցամաքներ կը ստանայ եւ քե
ինչե՛ր կան անոնց մէջ : Յոգուածագիրն է
Ռոպերթ Լինքլին Օ' Պրիքն , — Սպիտակ Տան
կամ ցախագահական պալատին ցամաքնե-
րուն ցախորդ վերաստուշը որ իր այդ պաշ-
տօնին բերմունքով կատարելապէս իրագեկ
կրնայ նկատուիլ :

ՌՈՒԶՎԷԼԹ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԹՂԹԱՔԵՐԸ

Շատերը այն բազմաթիւ նամակներէն ,
որոնք կը գրուին Միացեալ Նահանգներու
Նախագահին , ունին իմաստը նամակին կնոջ
մը , որ վերջերս կը գրէր Ռուզվելթ Նախա-
գահին , իր հօրը՝ պաշտօնի մը թեկնածու
թեան մասին : Այդ կինը կը սկսէր . « Կը կար-
ծեմ թէ այնչափ նամակ կը ստանաք որ , երբ
թղթաբերը կը տեսնէք փողոցին մէջ , հոգ
չէք ընել թէ ձեզի բան մը կը բերէ՞ թէ ոչ » :

Իրականութեան մէջ , թղթատարական
պաշտօնեայ մը չ'է՛ որ նամակ կը բերէ Սպի-
տակ Տունը : Էտուրրո Պէքլի անուն հաւա-
տարիմ թղթաբեր մըն է որ կը ծառայէ այդ
պաշտօնին , Սպիտակ Տան մէջ , եւ օրական
երեք երթուղարձ կ'ընէ թղթատուն : Ատե-
նով , ձիով կ'երթար կուգար այս մարդը ,
նամակները լեցուցած պարկի մը մէջ . բայց

այսօր , եօթնասուն երկու տարեկան ըլլալով , թիթեւելուկ միաձի կառք մը արուած է իրեն , Նամակներու առաջին ծրարը նախ կը ստանայ նամակատան պաշտօնէին գործի սկսած տետեն , ժամը 9ին , յետոյ անգամ մըն ալ ցերեկին , եւ վերջին անգամ ըլլալով՝ միջօրէէն ետքը ժամը երկու քուկէսին :

Նամակները նախ պարկէն կը հանուին պաշտօնէի մը կողմէ , որ երկար փորձառութիւններու հետեւանքով , կը ճանչնայ նախագահին մտերմական նամակները , եւ կըրնայ պահարաններու վրայի ձեռագիրէն , կամ թղթատարական նշանէն , ճանչնալ Նախագահին ուղղուած նամակները , եւ զանոնք ղրկութեամբ զատել : Առանց բացուելու , այս նամակները կը ղրկուին Նախագահին սենեակը : Ասոնց թիւը բազմաաւար փոքր է : Մնացեալ նամակները կը բացուին , կը զատուին եւ կը յանձնուին «պաշտօնարանի մաս» ըսուածին : Այս նամակներուն պատասխանելու եւ զանոնք նկատողութեան առնելու գործը , — եթէ անոնք չըլլան Նախագահին անձնական ուշադրութիւնը հրաւիրող բաներ , — յանձնուած է մասնաւոր պաշտօնեաներու :

Ասոնցմէ դուրս մնացած նամակները զարմացուցիչ կերպով այլազան են : Անոնք կը պատկերայնեն աշխարհի մէջ գտնուած գործերու ամէն տեսակները , եւ մտքէ չանցնող ամէն կերպ այլանդակութիւնները : — Նախագահին կամ Սպիտակ Տան պատկանող եւ լրագրիներուն մէջ արձանագրուող ոչ մէկ տեղեկագրութիւն կրնայ առանց նամակներու չեղձակոյտ մը տեղացնելու անցնիլ :

ԴԵՂԵՐ ՈՒ ԴԱՐՄԱՆՈՒՄՆԵՐ

Եթէ օր մը Ուաշինկընէն հեռագիր մը տեղեկացնէ թէ Նախագահը կը տառապի տկարութենէ մը , առիկա արդիւնքն է խորատներու շեղձակոյտի մը : Այս խորատներուն կ'ընկերանան յաճախ , դեղերու անագին չիչեր , առտին մարտողականներ , փոշիներ , եւ նոյն իսկ ձիակապիկներ : Նախագահին գործածութեանը համար ամէն կողմէ այս տեսակ յանձնարարականներ կը տեղան : Ի բաց առեալ նոր դարմանումի մը մոռնեալիկները ,

որոնք ընականաբար մեծ բաղձանքը ունին իրենց հաւատացեալներու ցանկին մէջ Նախագահինն պէս կարեւոր անուն մը ունենալու , մնացեալ խորհրդատուները բարեացակամութեան նպատակ մը միայն ունենալ կ'երեւան :

Նախագահին առողջութեանը հետ , նախանձախնդրութեան ոչ նուազ առարկայ են նաեւ իր բարոյականը եւ կենցաղը : Օր մը լրագրիները կը հրատարակէին Նախագահին մէկ նամակը , ուղղուած կնոջ մը , որ զինքը կ'ամբաստանէր թէ կիրակի չի ըռներ : Ահաւասիկ այն նամակը , զոր նախագահին անձնական քարտուղարը՝ Մր. Քորթէլեու՝ կը գրէր այդ տիկնոջ , իբր պատասխան իր ամբաստանութեան . — «Նախագահը ինծի պաշտօն կուտայ ըսելու ձեզի որ՝ ինք ամէն կիրակի առտու եկեղեցի կ'երթայ , յետ միջօրէի արարողութեան ատեն ալ , իր կինը եւ զաւակները հետը առնելով : Ասոնցմէ որի՞ն է որ զիտողութիւն կ'ընէք» :

Նախագահը իբր կանոն , չուզեր պատասխանել այս անսակ նամակներու , քանի որ ուրիշ պատասխան՝ դուռ կը բանայ թղթագրութեան մը :

Անցեալ աշնան հարիւրաւոր նամակ տեւադ Սպիտակ Տան մէջ , որոնցմով կը հարցուէր տիկին Ռուզվելտի թէ , ինչպէ՞ս կրնայ տարեկան երեք հարիւր տոլարով իրեն վայել կերպով հագուիլ : Ռիքսոքըր մը , եւրոպական մէջ կ'ըսէր նոյն իսկ թէ , Տիկին Ռուզվելտը ըսած է որ , կրնայ ընել այդ բանը , նոյն իսկ իր աղոց հագուստն ալ չինելով , այդ դրամին մէջէն . «Թէտիկին հինցուցած հագուստները Բէրմինգհեմ յարմարցնելով , եւ Բէրմինգհեմ ալ Բէնգիլին» : Հարցումներով կը վխտային նամակները , գլխաւորաբար կանանց կողմէ գրուած , այնչափ որ Սպիտակ Տան քարտուղարները պարտաւորուեցան վերջապէս պաշտօնական հերքում մը տալու յերկրուած առասպելին :

ՍՈՒՏ ԼՈՒՐԵՐԸ

Յաճախ սխալ տեղեկութիւններ են որ Նախագահին նամակներուն հակայական համամատթիւն մը կուտան :

Անգամ մը , երբ զաւակ մը կը ծնի Սպիտակ Տան մէջ , ստանաորդի ստախոսին մէկը պատմելով եղելութիւնը , չարածնութեամբ կ'աւելցնէ որ , քսանը ութը հատ տղու կառքեր զրկուած են , իբր նուէր , մինչդեռ ատանկ ոչ մէկ բան զրկուած էր : Սակայն լուրը այնչափ տարածուած եւ ամէն կողմ այնքան հաւատացուած էր որ , հարիւրաւոր նամակներ սկսան տեղալ , որոնք աւելորդ կառքերէն մէկը կը խնդրէին :

Նամակներէն ամէն մէկը խեղճութեան արտառուչ պատմութիւն մը կընէր , որուն ենթակայներն էին գլխաւորաբար հիւանդ մայր մը , ճեղքած մանկիկ մը , եւ կամ անգործ ամուսին մը : Այս խնդրարկուներէն շատեր այն աստիճան թշուառ էին որ , Նախագահին կնոջ մէն կը խնդրէին կառքին փոխադրութեան ծախքն ալ վճարել կանխաւ , որովհետեւ հաւաքակ պարագային՝ չպիտի կրնային ստանալ զայն :

Երբեմն Սպիտակ Տան պատկանող սուտ լուրերը ծաղում կ'առնեն հեռու կողմերէ , օրինակի համար Նախագահին անուանակից մէկու մը կողմէ , որ իր զրացիներուն խաղ մը ընելու համար կը պատմէ անոնց թէ , Նախագահը իրեն զրկած է քսանը հինգ տոլարի փոխանակադր մը , իբր նշան յարգանքի : Այս տեսակ լուր մը անմիջապէս լրագրիներուն մէջ կ'անցնի : Նոյն անունը ունեցող ուրիշ հինգհարիւր ծնողքներ ալ , ժամանակին կորսնցներ նախագահին գրելով՝ գանգատելու համար որ , արդար չէ ան՝ իր նուէրներու բաշխումին մէջ :

ՅԱՃԱՆՈ ՕՐԱԿԱՆ ՀԱՋԱՐ ՆԱՄԱԿ

Ռուզվէլդը նախագահը , անձնապէս մեծ ուղադրութիւն կ'ընծայէ Սպիտակ Տուն հասնող նամակներուն , քան իր նախորդները : Հակառակ այն կանխագուշակութեանց թէ չպիտի կրնայ յարատեւել այդ գործին մէջ , իր միւս պարտականութիւններուն հետ , ընդհակառակը Նախագահը փափաքող կը հանդիսանայ գիտնալու ամէն օր թէ՛ ինչ կ'ուզեն ըսել իր շուրջը գտնուողները , նոյն թիվ անոնք , զորս չէ ճանչցած եւ որոնց անունը չէ լսած : Ասոր համար , նամակներ

րու կրճատման դրութիւնն է որ օգտակարապէս ի գործ կը դրուի : Պաշտօնեայ մը , նամակները կը կարգայ , կը համառօտագրէ զանոնք ու ձեռքի տպագրիչ գործիքով՝ տպագրելէ ետքը , իւրաքանչիւր նամակին ճակատը կը փակցնէ կարօնը , Նախագահը աչք մը կը պտտցնէ համառօտագրութեանց վրայ , եւ եթէ ժամանակ ունենայ կամ ուզէ , բուն նամակներուն ալ կը նայի : Երբեմն համառօտագրութեան ընթերցումը՝ պաշտօնեայ մըն է որ կ'ընէ Նախագահին :

Ուղղակի Սպիտակ Տան պատկանող ո եւ է լուրջ նամակ՝ կը ստանայ իր պատասխանը , Նախագահը շատ քիչ անգամ իր ձեռքով բան մը կը գրէ : Իր պատասխաններէն շատերը սղագրութեամբ կը գրուին : Ասկէ զատ , շատ մը նամակներու պատասխաններն ալ իր անձնական քարտուղարին կը յանձնէ , միմիայն հրահանգները տալով . բայց նամակներուն մեծագոյն մասին կը պատասխանուի , — որովհետեւ Նախագահին նամակներուն թիւը օրական հազարի կը հասնի յաճախ , — ութը ձեռքի տպագրիչ մեքենայ գործածողներու (typewriter-clerk) կողմէ , որոնք այնչափ ատենէ ի վեր կը կատարեն այդ գործը որ , գիտեն թէ ինչ պէտք է պատասխանեն իւրաքանչիւր նամակի :

ԽՆՁ ԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԿԸ ԳՐԵՆ ՇԱՏԵՐ

Թերեւս կարելի չըլլայ լաւագոյն կերպով ծանօթութիւն մը տալ Նախագահին հասած նամակներուն վրայ , քան մէջ բերելով Սպիտակ Տուն հասած քանի մը ինքնատիպ նամակները :

Հետեւեալը մարդու մը կողմէ է , որ պզտիկ պաշտօն մը կը խնդրէ . —

«Պարկեշտօրէն եւ հաւատարմաբար ծառայեցի հօրս մինչեւ որ քսան երկու տարեկան եղայ , երբ ամուսնացայ Պիպէլ անունով աղքատ բայց պարկեշտ աղջկան մը հետ , որ ինձմէ երկու տարու պզտիկ էր : Բարի եւ հաւատարիմ կ'իմ մը եղաւ ան , բայց մեր մեծ դժբաղդութեանը՝ անիկա հարիւր քառասուն օխայի ծանրութենէ մը , — որ մեր ամուսնացած ատենին կ'չլուքն էր , — հասաւ երկու հարիւր ութսուն օխայի , միսէ տեւ

լորդ զանգուած մը շինելով իրեն , զոր չի կրնար կրել , եւ որ ստուգապէս ծանր բռն մըն է մեզի : Կրնայի՞ք ինծի յանձնել պաշտօն մը՝ ինչ որ կը տեսնէք թէ մեծ օգնութիւն մը պիտի ըլլար ինծի՝ այս պարագաներուն մէջ» :

Մասնաւոր պաշտօն խնդրող նամակներուն՝ Սպիրտակ Տան պաշտօնեան կը պատասխանէ ամէն անգամ թէ , Նախագահը չկրնար շահագրգռուիլ անձնական կամ անհատական պարագաներով : Անվճար խնդրարկու մը սակայն , որ այդ տեսակ պատասխանով մը չուզեր երեսի վրայ մնալ , կը դիմէ երկրորդ նամակով մը :

«Թէպէտ գրեցիք ինծի թէ բան մը չէք կրնար ընել ինծի պաշտօն մը ճարելու համար , սակայն գարձեալ շնորհք մը պիտի խնդրեմ ձեզմէ , որ է՝ երթալ հարցնել . . . յանձնակատարին թէ ինչո՞ւ չպատասխաներ իմ վերջին նամակիս : Պիտի խնդրեմ նոյնպէս ձեզմէ աչք մը հետեւ նամակներուս վրայ եւ ըսել թէ չե՞մ արժեր ես պաշտօն մը : Քսան վայրկեան անգամ չպիտի զոհէք այս գործը կատարելու համար» :

ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԻԱՄԻՏՆԵՐԷ

Սա զգացումը թէ՛ Նախագահը կը սիրէ անակնկալներ ընել , խորապէս միտած ըլլալ կը թուի հանրութեան մտքին մէջ , թերեւս անոր համար որ , թերթերը կը պատմեն դէպքեր , Սպիրտակ Տան վերաբերեալ , որոնք կը մոտեն անակնկալի սահմանին մէջ : Ամէն պարագայի մէջ , հարիւրաւոր նամակներ , որոնք պաշտօն , նպատակ եւն . կը խնդրեն , հիմնուած են անակնկալի տեսութեան վրայ : Նամակագիրը իր առաջարկութիւնը հիմնելով այդ օրինակ կռուանի մը վրայ , կը պնդէ թէ Նախագահը կը սիրէ անակնկալներ ընել , եւ թէ ոչինչ այնքան զարմացուցիչ պիտի ըլլայ իր շրջակայքին մէջ , քան իր ստանալը՝ ինչ որ կը խնդրէ . «Մասնեցէ՛ք , կը գոչէ խանդավառ խնդրարկու մը , որչա՛փ պիտի զարմանան ընակած քաղաքիս մարդիկը , զիս իրենց թղթատան պաշտօնեայ նշան տեսնելով» :

Ժամանակակից անբերեութեամբ շողշողուն մարդուկ մը՝ Սպիրտակ Տան ուղղած

իր առաջին նամակով , հանրային ու եւ պաշտօն մը կը խնդրէ , իրեն համար , ինչպէս նաեւ Սպիրտակ Տան կենդանաբանական պարտեզին ամենաթմանկազին տունկերէն շիւղ մը , իր . . . Նշանածին համար : Այս մարդը ուրիշ բաներ ալ ունի ըսելիք : Կը յայտնէ թէ վիճաբանական ակումբի (debating society) մը մէջ իր մրցակիցն է տղայ մը : Տեղեկութիւն կ'ուղէ թէ ի՞նչպէս կը խօսին Խորհրդարանին մէջ , այսինքն , ինչպէ՛ս կը սկսին ճառի մը , ինչպէս կը վերջացնեն , ի՞նչ շարժումներ կ'ընեն եւ ի՞նչ շարժումներ չեն ընեն : Ապահովաբար , իր հարցումներուն կատարեալ պատասխան մը չնորհքով քսան հատոր կրնայ լեցնել : Մարդուկը կը յայտնէ նաեւ թէ իր երկրորդ վիճաբանութիւնը պիտի ըլլայ Ուաշինկիդնի եւ Գոլոմպուսի բաղադատական մեծութեան վրայ , եւ կը խնդրէ Նախագահէն որ իրեն . . . նօթեր հայթայթէ Գոլոմպուսի կեանքին գեղեցիկ կողմերուն վրայ :

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՆՆ ԱՆ ԶՄՈՌՑՈՒՐ

Որչափ Նախագահը , նոյնչափ ալ իր Տիկինը ենթակայ է միլիոնաւոր տեսակ նամակներ ստանալու՝ ամէն կողմէ , ամէն անձէ , կիներէ , աղջիկներէ , որք տղոցմէ , վերջապէս միտքը բան մը ունեցող ամէն անհատէ :

Դեռատի հեղինակները կը սիրեն կարծել թէ Սպիրտակ Տան ընակիչները կը կարգան իրենց վերջին հեղինակութիւնը , ուստի հատորներ կը տեղացնեն :

Անունի տօնախմբութեան առիթով , ամէն տեսակ սուլվընիշներ , ձօնուած հատորներ , եւ նմանօրինակ յուշագրական նուէրներ կը տեղան դէպ առ դէպ Սպիրտակ Տան մէջ : Ասոնք չեն կորսուիր սակայն : Խնամով կը հաւաքուին :

Նախագահ Մաք Քինլիի ստացած նուէրներուն հաւաքածոն , որ Սպիրտակ Տանէն իր նախկին ընակավայրը՝ Քանդոն փոխադրուեցաւ , կատարեալ միւղի մը կը կաղմէ :

Ռուղվէլզ Նախագահին եւ իր Տիկնոջ ստացած նուէրներու հաւաքածոն ալ , այսպէս , օր մը , պիտի ըլլայ պատմական մեծ շահեկանութիւն ունեցող թանգարան մը :

ԱՆՊԵՐԱԳԱՐՁՈՒՄ

Գեղեցկութեանդ գերին եղած մարմնուն ,
Այ չեմ բզգար անուշ բուրումը վարդին .
Այ ալ լոյսը կը տեսնեմ ես արեւուն ,
Այնքան մութ ե սերս , անհուն ու խորին :

Ու չեմ լսեր քոչուններուն ձայնն անվերջ ,
Այ գիրքերուն հեռու քիւնները ալուր ,
Այ ալ սրտիս բաբախումը կուրծքիս մէջ ,
Գեղեցկութեանդ գերին եղած ամեն օր :

Մինչեւ հիմա չապրած սերս եր ու ալապես
Թուրքերու մէջ կ'երգէի ես անգալորում ,
Սերը ալուր երբեային կոյսերուն ,
Երազներու մէջ փայփայուած ամպի պես :

* * *

Ու հիմա ալ ուր կը սիրեմ քեզ անգուլ
Նոր ու անեղ պատգամներու հրաբխով ,
Կուլամ յանախ խաբուող կիօջ մը պես բոյլ ,
Առջի մաքուր ու սուրբ սերս յիշելով :

Մ. Ա. ՊԱՐՍԱՍՏԵԱՆ

ԾԱՂԿՈՑ

(ԳԱՒԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ)

Գ.

Ամպ-որոտ օր մը՝ Գոհարը երբ իր հոր-
թկը կ'արածեցնէր գեղին անկիւնը՝ յանկարծ
նշմարեց որ վտակին եզրը Մկրտի Սերոբ ու
գեղացի կ'ին մը քիթքիթ կը ժղին : Շուտ հոտ
առաւ , անպատճառ գողտնիք մը կար : Սպա-
ռեց մինչեւ որ անոնք բաժնուեցան իրարմէ ,
վաղման հասաւ կնոջ , էրիկ-գերիկ եղաւ ,
բան մը չկրցաւ հասկնալ : Տուն եկաւ մօրը
պատեց : Վառէն վարպետը , ոսկոր տարաւ
աղբատ կնոջ , լեպեց , լեպըռտեց , իմացաւ
որ Սերոբն ու Նշօն իրարու սիրահար , կ'աշ-
խատին ելք մը գտնել մէկտեղ փախչելու :
Առիթը ձեռքէ չփախցուց , անմիջապէս Սե-
րոբն ալ տեսաւ , զրոյէր որ չքաւոր է , կը-
րու արծաթ ձեռքը դրաւ եւ մէջքին վարկաւ :

ըսելով — « Քեզի տեսնամ աչկունքս , Նշօն
ձեռքէ չհանես , խառն ու մաւրաժք ինձմէ . . » :

Նա տուն դարձաւ եւ նոր հանելուկին բո-
լոր անցուղարձը պատմեց իր յուսահատ աղ-
ջըկան Յոյսի նշուլ մը ծագեց Գոհարի սիրտը ,
զոր աւելի ամրապնդեց Վառէն՝ գոչելով ու-
րախութեամբ , — մազ գլխէն չկօրիր — կըսէ
Ս. Աւետարանը , Աստուածն եմ կ'անչի , որ
Մանուկը խախտեալով եղնի , չվայելէ՝ Նշօյի
կանանչ պսակը : Պէտք էր սակայն իրենք ալ
աշխատէին , միշտ վառ պահել տալու Նշօյի
սէրը դէպ ի Սերոբ եւ փոխադարձաբար : Աղէ՛կ
տեղնէր իրենց կացինը զարնելու : Երբե՛ք
չվարանեցան եւ Վառէն ու աղջիկը վարպետ
ալ էին : Օր մը Վառէն քանի մը անջուր
գաթայ եփած , հաւ մը խորոված , քիչ մըն ալ
մրգեղէն՝ ու Գոհարն ալ հետը առած , այցե-
լեց Նշօյինց տունը : Լեցուն ամանին աքցի
չի զարնուիր . թէեւ Նշօյի մայրը Վառէի
զրկիցներէն ու մտերիմներէն չէր , բայց ա-
նոր նուէրներէն չլացած , լաւ ընդունելու-
թիւն ըրաւ : Գոհարն ալ առիթ գտաւ Նշօյի
սիրտը բանալու եւ անոր տարտերը լսելու :
Այնքան վարպետութեամբ զրգուց զայն ,
մինչեւ որ Նշօն կրկնեց իր ուխտը — կա-
նանչ մեռնի վկայ եղնի քուրիկս , մնա՛մ՝ Սե-
րոբին եմ , մեռնիմ՝ հողերուն . . . :

Մայր եւ աղջիկ մեկնեցան , չմոռնալով
կրկնիկ տալու Նշօյի յուզումներուն : Գործը
հոն հասաւ , որ Նշօն ու Սերոբ առթի մը
կը սպասէին փախուստ տալու :

Ինչ հունար որ կար չխնայուեցաւ երկու
սիրահարներու եւ թէ՛ անոնց համակիրներու
կողմէ , կարելի չեղաւ : Անցած դարձածը
կռահուած էր , խնամանց երկու դասերն ալ՝
բազէի պէս կը հակէին Նշօյին վրայ :

* * *

Հասաւ աշունը , հասաւ եւ պոսակադու-
թեան օրը : Հարստանեկան ամէն պատրաս-
տութիւններ տեսնուելու էին , կապ ու կուպ
չէր մանցած : Գիշեր մըն ալ եւ հաւ հետեւեալ
օր Նշօն պիտի մոտէր Մեղքոնի հետ յառա-
գասաւ . . . : Ծաղկոցի գիշերն էր : Հարանցու
աղջկայ՝ հօր տան մէջ՝ վերջին գիշեր ունե-
ցած խնջոյքին՝ կ'ըսեն Ծաղկոց : Նոյն իրի-

կուն յատուկ կոչնականներ կ'ենեն զիւղ՝ խորհրդը՝ փեսային տուն եւ աղջիկները հարսնացուն տուն հրաւիրելու : Վերջինին առնը հինգնադօնի պիտի ըլլայ բոլոր աղջկանց , որոնք պար առած հարսնացուն բոլորաբ' կը դուստնեն զայն , իր գովանքը կ'երգեն , օրհնէնքը կ'արտասանեն ու սիրտը կը բանան՝ մինչեւ կէս գիշերուայ մօտ , երբ արգէն՝ երկու երեքը կը մնան հարսին մօտ , իսկ միւսները կ'երթան փեսահագումին մասնակցելու :

Ծաղկոց , ո՛հ , ո՛րքան սիրելի ու սիրալի ազապ աղջիկներաց , Խորհրդաւոր առանցք եւ վերջին յենակէտը կուսութեան—նարսնաւորեան : Եւ վերջակէտ կուսական արձակ կեանքին , սիրայեւ , սիրաւառ համարձակ ժամանցներուն : Ծաղկոցէն վերջ նոր կեանք կը սկսի՝ քողքուկ ու փակուած կեանք , որ կը զեղչէ , կը կտրէ աղջկնակ բոլոր զուարճութիւնն ու զուարթութիւնը , պտոյան ու զրօսանքը , ծաղկոցն ու տապկոցը , սրաւանութիւնը , սիրաւանութիւնը : Թռնիկ մը վանդակի մէջ , որուն վրայ կը հսկէ սկեսուրին անողոք հայեացքը : Ծաղկոցէ վերջ՝ աղջկի—հարսը կը գտնուի օտար առիթի տակ , օտար տախթի վրայ , ամէն բան օտար , միայն փեսայ մ'ունի , որուն հետ լեզու պիտի կրնայ թացել , այն էլ ծածուկ ու տան փոքրիկ խուժիկները : Անոնցմէ զատ՝ խօսակցելու համար հարսի լեզուն կապուած է տարիներով : Անոր եւր չկայ այլեւս : Ամէն բանին մէջ հրամանի պէտք ունի , ելնելու , նստելու , հանգստանալու եւ նոյն իսկ ուտելու , խմելու համար եւայլն , հրամանի կը սպասէ ոչ միայն սկեսուրին , այլ տան ամէն անդամներուն , մեծին ու փոքրին : Իրիկունը՝ այն առան միայն պիտի քնանայ , երբ որ ամբողջ ընտանիքը կը մ'ափէ , եւ առաւօտ՝ աքլօրի ձայնին հետ օտք պիտի ելնէ , օտքի պիտի մնայ ամբողջ օրը : Նա նստելու իրաւունք չունի՝ գրեթէ աղօթքանէն չուր ճրագընցման : Այս ամէնքը աչքի առջեւ ունենալով ինչպէս եւ հօրենական—մօրենական ասպնջական ու օրրան տունէն բաժանումը յիշելով՝ աղջիկ—հարսը մեծ յուզումներ կ'անցունէ : Ահա այս յուզմանց՝ Սերտի սիրոյ կրակով էլ վառուած՝ կը տառապէր Նշօն , չըջապատուած գուռ—գրկից

ազապ աղջիկներով , որոնց իւրաքանչիւրը երբ կը մանէր ի ծաղկոց , նախ պիտի համարուէր Նշօյին հետ եւ յուզումնակից ըլլար անոր աղջկնութեան , խնդակից հարսնութեան : Հինգնադօնքը սկսած էր , խոշոր ամանի մէջ լուծուած հինման կը սպասէր աղջկանց փափուկ ձեռքերուն՝ երբ գովանքը կ'երգէին :

Դու եկար , բարով եկար , քու գալ ընձի դուր եկաւ ,

Ծառեր ըմէն ծաղկեր են , Նշօն սիրով կարգեր են ,

Դու ելեր էր կ'եգէր ժամէն , ղենի հոտ կիզէր ծամէն ,

Բու ծամու ծանարութենէն , կապու վրէն բուն էր դրէ ,

Ծամ թելի զընկզընկալէն մեղմ , կաղան առաւ զձագեր թռաւ . . . եւայլն :

Գովանքը կը կրկնէին մեղմ , դաշն եւ յուզեալ ձայներով : Անկէ վերջ՝ նոր—հարսէն սկսած , ամէն ձեռներ հիննայով ներկուցան , սկսեցին եւ շնորհաւորուիք : — Ծիւս , ծաղկիս Նշօ , կանանչ դառնաս , ծառ նշենի , ծառ խնկենի դառնաս , քու թեւերուն տակ երա՛մ , երա՛մ երախաք խաղան . . .

Փեսան ալ իր բոլոր ընկերներով եւ մասնակցութեամբ շինականաց կը գտնուէր ի խաղատուն , ուր կուսանք կը խաղան , գուսանք կընուագեն , փեսահագում պիտի ըլլայ խաչով—խաչփողով , ծափով ու գովանքով . . .

Արգէն քառասունէն աւելի ազապ աղջիկներ հաւաքուած էին , Նշօյնց տան այն մասը , որ ծաղկոցի յատկացուած էր : Ծրագն ի վառ՝ իրիկուն էր : Ըստ սովորութեան նշանուածին գլուխը կարմիր քողքով պիտի ծածկուի , նշան՝ թէ կուսութիւնը հարսնութեան պիտի փոխուի . . . Այնպէս ալ ըրած էին , եւ Նշօն արտոււմ էր : աշխարհը սեւ , ինքը մէջ : Նա ամբողջ անդադար դէպի դուռը կը նայէր , մէկի մը կը սպասէր , որ շա՛տ կ'անդնար , կանգնար : Գոհարն էր իր սպասածը , որ սակայն չէր կոչուած ի ծաղկոց , ուր անհրաւէր ազապ աղջկայ տեղ չկայ : Գոհար հրաւէրի—մրաւէրի շատ աչքողներէն չէր , հաւ—նինջ մը իրիկունէն անցնելէ վերջ՝ հագուորաւ հարսնից հալաւներով , կախեց շարքն

ու զարդը՝ մէկ աւուր նոր-հարսի նմանակ՝
կաւ ի դուրս :

Աշնան աշնուկ բայց անուշ գիշեր էր ,
երամաղուրկ հաւքերու կանչիւնը , նորա-
լուսնի մաղմղուկ շողերը՝ պծառուն լոյսերը
կարծես յուզմանց տարափ մը թափեցին ա-
նոր վրայ : Ծառ հեռու չէր հարսնից տունն
էլ , ուր կը գմային գուսանքն եւ ժողովն շի-
նականին : Բանձր՝ կոնաձեւ տանքի մը ան-
կիւնը գտաւ Սերորը՝ նախապէս եղած ժա-
մադրութեան մը համաձայն , որուն հետ կարճ
քափոց մը փոխանակելէ վերջ , իրարու հետ
թրաթափ հեռացան :

Ծաղկոցը պիտի երթային ու դացին՝ անո-
րինակ յանդգնութեամբ :

* * *

Ծաղկոցի տո՛ւն , եշնող մանողը ո՛վ կը
հարցնէ : Նշոյի վրայ եղած զգուշաւոր հըս-
կութեամբ լինենք ալ վերջ գտած էին , ոչ մի-
այն ծաղկոցին համար , այլ այն կեղծ համա-
կերպութենէն , զոր աղջիկը յայտնած էր
Սերորի հաւանութեամբ : Գոհար՝ Սերորը բա-
կին մէջ ծածկելէ վերջ՝ ներս մտաւ , առանց
բնաւ նշմարուելու : Ծիւղդ այն ատեն կը հաս-
նէր , երբ աղջկունք փեսահագուստին դացեր
էին , երեք փոքրահասակ աղջիկներ թողով
Նշոյին պահապան , որոնք արդէն կը մրսփէին :
Հասնելն ու Նշոյի վզին պլուսիլը մէկ
եղաւ : Նշոն՝ յուզմունքէն սկսաւ լալ : Ծաղ-
կոցի կողքի տակէն՝ նոր փեսին դէմ նոր
հարսի կողմէ վառութիւնը շինական հա-
մայնքին համար՝ շատ անուր եւ շատ ալ
հազուադէպ բան էր : Նախապաշարուած աղ-
ջիկները՝ որչափ ալ սէր ու սիրտ չունենան
դէպ նոր փեսան՝ իրենց հոգին ու մարմինը
արտելով պիտի համակերպին , որովհետեւ
նրբելի չէ անոնց ոչ ի գրոց եւ ոչ ի բրոց
ընդլիկ ծաղկոց-պսակի լուծէն . . .

— Նշո՛ , տաաց Գոհարը դողդաղով՝ ականջ-
դիմս (աւետիք) ի՛նչ կուտաս :

— Ի՛նչ ահնջկալէն , բան մ'ունի՞ս , ըսէ ,
փոր եփելու ժուժ չէ՛ :

— Սերորը ձեր բակդրան մէջ՝ ժրուկ-
ժրպնտուկ՝ երկու ընկերներով քեզի կ'աչքէ :

— Աստուած սիրես , ողորդ կ'ըսես , ու
աստիկ յուզուեցաւ :

— Կանանչ մեռն վկայ , դե՛հ , շուտ ըրէ՛
Քիչ մնաց փեսահագուստ փրդի :

Նշոն ալապ-զալապ ոտք ելաւ Գոհարին
օգնութեամբ : Մարդ չկար դուռ , կամ դրա-
վէրք . անուշկեկ մը բակը սողոսկեցաւ , Սե-
րորն եւ ընկերք հոն էին , հարսնցուն առած՝
անմիջապէս մեկնեցան այն հեռաւոր թաղըս-
տոցը , զոր շուտով պատրաստեր էին :

Գոհարն էլ իր կծիկը դրաւ եւ իրենց տու-
նը փախաւ :

Երբ դէմ աղօթքան փեսահագուստը աւար-
տած , հարսնեւորները տուն դարձան , ծաղ-
կոցը դարտակ գտնելով , զահլափուշ եղան :
Անրացատրելի յուզում մը սկսաւ երկու խը-
նամիներու ու բոլոր գեղին մէջ : Տուն ու
անակ չմնաց որ չխուզարկեցին , ու Նշոն
չկար մէջտեղ : Արեւն առեր էր , երբ իմա-
ցան թէ Սերորն էլ գեղ չէ : Էլ ինչ որ եկաւ
Սերորի աղքատիկ հօր ու մօր վրայ , Աստ-
ուած դէլ-գազանին չցուցնէ :

Իսկ Նշոյի եւ աղուն — նոր-փեսին տար-
տերը զրուցել չիգար , փեսահագուստի գովանքն
ընդունած՝ նոր-փեսան՝ անպատճառ պէտք է
հետեւեալ առտուն պսակուի : Եթէ ոչ , էլ
պսակի արժան չէ : Նշոյնց տունը սուգի
տուն դարձած էր : Ոչ մէկի երես արիւն ու
ժպիտ չկար : Այս տեսակ նախատինք փեսա-
յին դէմ՝ չլուծած բան է :

Այս տարտին վրայ , յոյն առաւօտ վաշխա-
ռուն ալ իջած ու Նշոյի փողպատը ժողված՝
20 ոսկին կը պահանջէր , զոր փոխ տուած էր :
— Եզն որ ինկնայ , քերթողներ կը շատնան :
Նշոն՝ մաղ մնաց որ կաթուածահար ըլլար :
Ծիւղդ ժամանակն էր , Վառէն եկաւ հասաւ :
— Նշո՛ , Մեկքոնը ողջ մնա՛յ ինչ հոգ կ'ընես ,
ա՛ռ 25 ոսկի , տո՛ւր պարտատիրոջ , Աստ-
ուած աղջիկ մ'էլ կը դրստէ հարկաւ , քածի մը
համար հո՛գ պիտի ընես : Ասիկայ սփոփանքի
սրւն մ'եղաւ Նշոյի սրտին : Մտմտաց , եւ
ընկիւթը որոշեց : Վաշխառուին պարտքը
տուաւ , ու հարսնեւորները քոմելով՝ մտաւ
Վառէին տուն , Գոհարը հազցուց եւ Մեկ-
քոնը առջեւէն տարաւ ի ժամ : — Ծակատը
գրուածը չաւրուի՛ր՝ ըսեր ու համոզեր էին
զՄեկքոն : Կամայ , ահամայ համակերպած էր
եւ պսակը տեղի ունեցած :

Եղածն եղած էր , եղածն օրհնուած էր :

Երկու շաբաթէն վերջ , Նշոյի եւ Սերորին
ալ պսակը տեղի կունենար հեռաւոր գեղի մը
փոքրիկ ժամին մէջ , Վիճկարը սուտ չէր
ըսած : Երկու զոյգն էլ իրենց բաղձանքին
հասան :

Վ Ե Ր Ջ

ԳԵՂԱՍԾ

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Տ Ո Ւ Փ

Յ. Կ Ձ. (Սկանիկ) : — Ձեր հոկտ. 14 ամսամբիւ նամակին համաձայն , զանձեցինք Ձեր մանտա-բոսը Օսմ. Նամակատունէն ի հաշիւ Մասիսի բաժանորդագրութեան 1902 տարւոյ :

Ա. Մ. Կ. (Կեսարիա) : — Ղրկեցինք Թիւ 38—39—40 Մասիսները : Հաշիւնիդ ճիշդ է :

ԳՈՐԾԱԿԱԼ (Իզմիր) : — Ձեր յանձնարարած նոր բաժանորդին թերթերը սկսանք ղրկել հոկտ. 5ի (40րդ) թիւէն :

ԳՈՐԾԱԿԱԼ (Սամսոն) : — Նոյնպէս :

ՏՈՔԹ. Յ. Փ. (Տրամա) : — Դանձեցինք Ձեր մանտա-բոսը Օսմ. Նամակատունէն ի հաշիւ Ձեր բաժանորդագրութեան ինչպէս նաեւ Օվաճըզի վարժարանին Ձեր նուիրած Մասիսի բաժանորդագրութեան :

Կ. Բ. Ֆ. (Էտինհիք) : — Ժամանակին ստացած ենք Ձեր նամակը՝ ներփակեալ օսմ. նամակադրոյմով , որով կը փակուի Ձեր Մասիսի բաժանորդագրութեան տարե-վճարի հաշիւը : Հասցէի փոփոխութիւնը կատարուած է եւ անշուշտ թերթերը կը ստանաք կանոնաւորապէս :

ԳՈՐԾԱԿԱԼ (Խարբերդ) : — Դեռ ապաստենք տեղւոյդ Մասիսի բաժանորդագրութեանց զանձուքն ու առաքուածին : 1902 տարեշրջանի 10րդ ամիսն ալ լրացաւ :

Կ. Պ. (Էսկիշէն) : — Դանձեցինք կրկնակ բաժանորդագրութեան : 1901 տարեշրջանի Մասիսներու ամբողջական հաւաքածուն ղրկուեցաւ Ձեր հասցէին , 2 ծրարով :

Վ. Գ. (Կարին) : — Ստացանք Բառու Հայգէի վէպին թարգմանութիւնը զոր պիտի սկսինք հրատարակել իրր թերթին : Ներկեալին գտած ընդունելութիւնը գրաւական մըն է որ նոյն հեղինակին այս նոր ու գեղեցկագոյն վէպը աւելի արտօթով պիտի կարգացուի Մասիսի ընթերցողներուն կողմէ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Իզմիրի լրագիրները կը ծանուցանեն թէ Առաջնորդ Տ. Մեղիքիսեղեկ Արքեպիսկոպոս հրաժարական տուած է՝ անձնական տկարութեան պատճառով եւ թէ Իզմիրի Հայերը կը վախճանին իրր առաջնորդական ընտրելի ներկայացնել Երէցեան Տ. Գէորգ Եպիսկոպոսը : Կանխաճառ կը թուի մեղի Իզմիրի թղթաբերին բերած այս արձագանքը , վասնզի եթէ Մեղիքիսեղեկ Արքեպիսկոպոս հրաժարական տուած ըլլար՝ նախ եւ առաջ Պատրիարքարանը գիտակցութիւն պիտի ունենար : Ամէն պարագայի մէջ , եթէ երբեք Ն. Արքեպիսկոպոսը հանգիստի ու դարմանի պէտք ունենալով՝ հարկադրուի թողուլ Իզմիրի առաջնորդութիւնը , Երուսաղէմի Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդը է՛ն արժանաւոր ընտրելին կրնայ

ըլլալ Իզմիրի առաջնորդութեան : Միայն թէ, Երէցեան Արքեպիսկոպոս պիտի կրնայ թողուլ իր արդի ոչ նուազ կարեւոր պաշտօնը , երբ անորին՝ Երուսաղէմի մէջ՝ լուսարարապետի պաշտօնն ալ բաց կը մնայ :

ԲՐԾ. Յ. Գրիգորեան , որ իբր քառորդ դար ժամանակամիջոց մը Այնթապի «Կեղր. Թուրքիոյ Քօլէճ»-ին մէջ ուսուցչական արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը ունենալէ ետքը , մայրաքաղաքս հրաւիրուեցաւ Անեսարեքի խմբագրութեան մէջ կարեւոր բաժին մը ունենալու համար , շարժուա սկիզբը Պատրիարքարան գնաց՝ իր ծերունի հօր Պատուի Գարա Գրիգորի հետ : Տ. Բարգէն վարդապետ որ կընկերանար անոնց , ներկայացուց Ս. Պատրիարք Նոր որ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ : Ն. Արքեպիսկոպոսը յանձնարարեց Պատ. Գարա Գրիգորի իր հայրական ողջոյններն ու օրհնութիւնները տանիլ Այնթապի քահանայական դասին : Յարգելի հիւրերը Մայր Եկեղեցի իջան , յետոյ այցելեցին մայր-վարժարանը :

Տօքթ. Տիգրան պէյ եւ Տիկին Աճէմեան զառն սուգով մը համակուեցան՝ իրենց ծաղկատի աղջկան Օր. Ատրինէի մահուամբ , որ հակառակ մինչեւ իսկ Բարիգի մէջ տրուած թշկական ճարտար դարմաններու՝ չի կրցաւ ճողոպրիլ ջրգողութեան ախտէն որով կը տառապէր : Յուղարկաւորներու ստուար բաղմունքիւն մը , որուն մէջ զլիսաւոր տեղը կը զրաւէր հայ եւ օտար թշկական մարմինը , կիրակի օրը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին ներկայ գտնուեցաւ վաղամեռիկ օրիորդին յուղարկաւորութեան եւ մինչեւ Շիշլի գերեզմանատունը հետեւեցաւ դադաղին որ ծածկուած էր պսակներով , Բազմագոյով ու վշտահար հայրը ընկճուած էր իր սուղին ապի զոր բարեկամներու միթիարական արտայայտութիւնները չէին զօրեւ մեղմացնելու : Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք յարգելի Տօքթէօնին ու Տիկին Աճէմեան պէյի իրենց ծնողական սիրտը խոցող այս անողորմ հարուածին համար :

Արժանատի Կ. Ս. Իիթ-Իիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօգուլուր, Թիւ 27

ԱՊՐԱՐԻԿ ՎԱՅԱՌՈՐԻՄ

ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ՀԵՐՁԱՅԻ



ԱՊՐԱՐԻԿ ՎԱՅԱՌՈՐԻՄ
Յաճախողաց զիւրաբան
համար

ՎԵՐՋՐՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոճարեղէններ
ուսնեալ զիւսնեք

Կ. Պոլիս, Ոսկերչաց

Շուկայ մեծ փողոց թիւ 13

Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոճարեղէններ
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ
Հերմայի վաճառատան գրիններն անմարգելի են
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
տառարկաներ :

Հերմայի վաճառատունը ունի ժամացույցներ
եւ արծաթեղէն գաւազաններ (պապոթն) :

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարկւրին իսկ կանխիկ , մնացեալին հա-
մար շարժեալ կան ճարկին հինգ զմարում :
Կանխիկ գնողին համար 100ին 5 գինը :
Գործածուած գոճարեղէններ՝ եթէ փնտա-
ռուած չեն՝ 100ին 10 գինը : Կան ճարկին



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ . բայց կական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ . սրովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

(ՀԱՅՐԱՅՐԻՉ ԿԱՅՈ. ՊԱՆԱՏԱՆ)
The Singer Manufacturing Cie

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին :

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ :

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօս Մառէի դէմ , թ. 343 եւ 343 կրկն
2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան , Թիւնէլին ետեւը .
2. Գարաքէօյ , Թրամիլէյին կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ , թիւ 2 .
2. Սուլթան Պէյազիտ , Թրամուէյի կայարանին դէմ , թ. 13

ՍԿԻԻՏԱՐ

Չարը Պօյու , թ. 120 .

Դասերը եւ նորոգութիւնն ձգի .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր կաղապներուն մէջ

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց ,
թ. 343 եւ 343 կրկն , Սարգիս պէյ Տիւզօղլուի տունը :

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՅԱՌՈՐԻՄ

Արդէն հրատարակուած է

1903 ՏԱՐԻՈՅ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Բ Ը

(AGENDA INTERNATIONAL)

(H. MATTEOSIAN)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Նախորդ տարիներէն աւելի հոխ եւ աւելի խնամով պատրաստուած

Պարզ լաթակազմ	3	դր.	} 25 օրինակէն աւելի գնողներուն զոհացոյցի գեղջ :
Ընտիր լաթակազմ	5	»	
ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄԸ	8	»	

Կը խնդրուի գաւառի պատուարժան յանախորդներէն որ հաճին իրենց յանձնարարութիւնները կանուխէն ընել՝ Յուշատետրերը ժամանակին ձեռներէն ունենալու համար : Իմել Հրատարակչին ,

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Ի Ն Ի Յ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՀԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շնորհք	240,000,000 ֆր.
1899ին դանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՀԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շնորհք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Խնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղջեալ գիներով : Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Խնիօնի ապահովագրութեան ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալարութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեալք գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատուեն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՍՏԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Թահապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնը Թուրքիոյ գիտաւոր քաղաքաց մէջ